

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ.

Դ.

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՀԱՅՐԸ,

Քրիստոսի քարոզութիւնն, ինչպէս տեսանք, Աստուծոյ արքայութեան քարոզ է. նորա առաջին հիմնական խնդիրն է համոզել որ բարձրագոյն բարին՝ մարդկային ամէն ակնկալութեանց ու մաքուր իղձերի լրումն, Աստուծոյ բացարձակ իշխանութեան ներքոյ, Աստուծոյ շուքի մէջ կեանք ունենալն ու Աստուծոյ ներկայութիւնը վայելելն է: Երկրորդ կարենօրագոյն և այս գաղափարին բովանդակութիւն տուող խնդիրը պէտք է լինի ուրեմն պարզել, թէ ի՞նչ է Աստուած մարդոց համար և ի՞նչ են մարդիկ նորա աչքում: Աւետարանի չորս ասացուածների մէջ յատկապէս որոշ կերպով տրուած ենք գտնում այդ հարցերի պատասխանը, և նոցա մի առ մի պարզաբանութիւնը ամբողջ խնդրի պարզաբանութիւնը կլինի:

ա) Տէրունական աղօթքը: — Ղուկաս աւետարանիչը պատմում է, որ մի անդամ Փրկիչն աղօթք էր անում՝ երբ վերջացրեց, աշակերտները խնդրեցին, որ իրենց աղօթել սովորեցնէ, և նա այս աղօթքը սովորեցրեց: Անշուշտ Նորա աղօթելու միջոցին աշակերտներն այն տպաւորութիւնն էին ստացել, թէ նա բոլորովին տարբեր կերպով է աղօթում քան իրենք՝ թէ իրենց աղօթածը իսկական մտքով աղօթք չի եղել: Եւ ահա մենք ևս Փրկչի խօսքերից պէտք է սովորենք, թէ ի՞նչ է նշանակում աղօթել. թէ ի՞նչպէս պէտք է երես առ երես կանգնենք Ամենակալ Աստուծոյ առաջ, ի՞նչ պէտք է զգանք և ի՞նչ արտայայտենք նորա ներկայու-

Թեամբ: — Մենք այնքան անգամ կրկնել ենք այդ աղօթքը առանց մի բան զգալու կամ մտածելու, որ դժուար կարող ենք մեզ հաշիւ տալ, թէ որչափ խորհուրդ կայ թագնուած նորա իւրաքանչիւր խօսքի մէջ։ Բաւական է առաջին խօսքը միայն։ Ի՞նչպիսի վստահութիւն պէտք է ունենայ մարդ այդ մէկ խօսքն արտասանելու համար. ինչքա՞ն բարձր պէտք է կանգնած լինի շրջապատող չնչին իրականութիւնից, ինչքա՞ն հեռու և ազատ առօրեայ մանր հոգսերից, յուղումներից և ցանկութիւններից, որ համարձակուի աչքերը վեր բարձրացնել ու տիեզերքի Արարիչ Աստուծունի թիր հայր անուանել։ Եւ ինչպիսի հրձուանքով, ինչպիսի ջերմութեամբ ու պայծառ լուսով պէտք է լեցուի նորա հոգին, երբ որ մտածէ, թէ երկնակամարի այս ջինջ եթերի՝ թէ այս փայլուն արեի ու ասաղերի միւս կողմը խաւար ու մեռելութիւն չէ, այլ նոցա իւրաքանչիւր կէտից մի ամենախնամ Հօր բարի աչքն է իւր վերայ նայում. թէ մի կենդանի ու անհուն սիրով լի սիրու է բարախում այս անսահման տարածութեան կրծքում, և Երկնաւոր Հօրը փարել, նոյն է թէ այդ անսպառ կենդանութեան աղբիւրին մօտենալ՝ սուզուիլ նորա մէջ, ապրել նորա բաշխած յաւիտենական երանաւետ կեանքով։ Այդպէս աղօթել հեշտ չէ. այդպէս բոլորովին կտրուել աշխարհից և երկնքում սաւառնել՝ ամփոփուել իւր հոգու խորքում և իւր Աստուծոյ հետ միայն լինել, կարող են հազուագիւտ զօրեղ՝ մի գերբնական զօրութեամբ օժտուած, անձնաւորութիւններ. իսկ այդ ընդունակութիւնն ունենալուց և Երկնաւոր Հօրն ի մօտոյ ճանաչելուց յետոյ բնական է, որ նոցա ջերմ բաղձանքը դառնայ՝ չելնել այլևս այդ սուրբ մթնոլորտից, Աստուծոյ սուրբ անուան հօվանին։ Աստուծոյ թագաւորութեան բացարձակ իշխանութիւնը տարածուած տեսնել իրենց վերայ և իրենց շուրջը։ Սակայն այդ բաղձանքի հետ չի միացած նաև երկրաւոր գոյութիւնը դադարեցնելու ցանկութիւն։ աղօթող հոգին կապուտակ երկնքի հովն առնելով չի յափշտակուում, իւր փոքրիկ երկիրը չի մոռանում, այլ յօժարութեամբ դառնում է այնտեղ՝ համոզուած լինելով, որ այդ երկիրն ևս Աստուծոյ

թագաւորութեան մի մասն է, և երկինք դառնալ և իւր քնակիչներին ամէն երկնային բարիք վայելելու միջոց տալ կարող է, միայն Աստուծոյ կամքը կատարուի այնտեղ նոյնպէս բացարձակ կերպով ինչպէս երկնքում. և ահա այդ էլ խնդրում է:—Տէրունական ազօթքի երկրորդ մասը նուիրուած է երկրաւոր հանգամանքների, բայց ազօթողն արդէն բոլորը երկնքից ճառագայթած լոյսի մէջ է տեսնում. նա ոչ մի ցանկութեամբ կապուած չէ նոցա հետ, ոչ մի բարիք նոցա մէջ չի որոնում. բաւական է, որ Երկնաւոր Հայրը տայ նորան իւր ապրուստի համար անհրաժեշտը և վերցնէ նորա վերայից՝ նիւթական աշխարհի բռնութեան ներքոյ ծանրացած, պարաքի բեռը: Այստեղ ևս նորա գլխաւոր հոգսն է՝ մօտ լինել միշտ և անրաժան ամեն բարեաց աղբիւր Աստուծուց. իսկ պարտքը բաժանում է, մեղքի արատը զրկում է սրբութեան հանդէպ ելնելու համարձակութիւնից: Գոյութեան կոիւ մզելով անհոգի բնութեան տարերքի հետ՝ նա շարունակ փորձութիւնների ենթակայ է, ամէն կողմից շրջապատուած ու կաշկանդուած է զգում իրեն չարի խաւարային ուժով. ուստի նորա փափազն է աղատ մնալ փորձութիւններից, փրկութիւն գտնել չարից, կարողութիւն ստանալ կոիւր քաջութեամբ գլուխ հանելու և յաղթութեան պսակին արժանանալու: Այսպիսով «Հայր մեր»-ը մեզ ներկայացնում է, ամբողջ աւետարանի համառօտակի ամփոփումն և սքանչելի պարզութեամբ ցոյց է տալիս, թէ ինչ է բերել մեզ աւետարանը. Աստուծոյ որդեգրութիւն ուրեմն, որով Աստուծոյ հոգանին մեր ողջ կեանքի վերայ տարածուած՝ Աստուծոյ աջը իւրաքանչիւր քայլափոխում մեզ զօրափիգ ենք տեսնում. յաւիտենական բարեաց և ուրախութեան հասնելու հաստատուն յոյսն ենք ունենում, և այդ յուսով ու փստահութեամբ անյողողողդ մնում ամէն չարիքի զեմ:

բ) «Նորա համար մի՛ ուրախանաք, որ ոգիները ձեզ հնաղանդում են. այլ ուրախացէք, որ ձեր անունները գրուած են երկնքում:—Այս ասացուածքը գեղեցիկ կերպով բնորոշում է, թէ ինչն է կրօնական կեանքի իսկա-

կան յենակէաը՝ ամենից էականն ու դլխաւորը նորա
մէջ. — գիտակցութիւն Աստուծոյ մերձաւորութեան: — Քրիս-
տոսի աշակերտները վերադարձել էին առաջին քարոզութիւ-
նից. նորա հրձուանքով պատմում էին, թէ ինչպիսի մեծ յա-
ջողութիւն էին գտել. թէ ինչպէս իրենց առաքողի անուան
առաջ տեղի էր տուել ամենուրեք չարի ոյժը, և լայն աս-
պարէզ բացուել ճշմարտութեան աւետարանի համար: Եւ
Փրկիչն ինքը շատ բարձր՝ կարելի է ասել համաշխարհային,
նշանակութիւն էր տալիս այդ յաջողութեանը. գեերը հը-
նազանդում են մարդոց. մարդկութիւնը դատապարտուած
չէ այլ ևս տարուրերուելու զանազան պատահանութեանց
մէջ՝ գերի և խաղալիք բնութեան գրկում թագնուած մոայլ
զօրութիւնների ձեռքին, այլ ահա մի խումբ հասարակ և
խեղճ մահկանացուներ հրաման են արձակում այդ զօրու-
թիւնների դէմ, բարձր ի գլուխ կոխում անցնում նոցա
վրայով, և գիտեն ուր են գնում՝ կարող են ամենքին ուղիղ
ճանապարհ ցոյց տալ դէպի յաւիահնական կեանքի խաղաղ
նաւահանգիստը. ստանան ընկած է իւր առերեոյթ իշխա-
նութեան բարձրութիւնից՝ կայծակի շլացուցիչ փաղանցուկ
փայլով փայլում անցնում է, և տեղը հաստատուում կեն-
դանատու պայծառ լուսոյ մշտնջենական թագաւորութիւնը:
Սակայն որչափ մեծ պէտք է լինէր առաքեալների մոլորու-
թիւնն ու յուսախարութիւնը, եթէ մտածէին, որ ինչպէս
յաջողութեամբ սկսուեց իրենց ընթացքը այնպէս և անար-
գել յառաջ կերթայ՝ որ գործի ամբողջ մեծութիւնը նոյն
խիկ այդ արտաքին յաջողութիւնն է, և նորա ապահովու-
թեան համար հարկաւոր է, միայն մի գերբնական կարողու-
թիւն ունենալ, մի դիւթական անուն գործածել: Փրկիչը
շտապում է այդպիսի թիւրիմացութեանց առաջն առնել՝
դէպի երկինք ուղղելով նոցա հայեացքը, դէպի Ամենակալ
Աստուծոյ աթոռը, որ միակ հաստատուն կայանն է իրերի
յեղյեղուկ և փոփոխական գրութեան մէջ: Որդիական կա-
տարեալ հաւատքով վեր նայել այդ Աստուծուն, վստահ լի-
նել որ քանի նորա հովանաւորութեան ներքոյ ենք դըտ-
նուում, ոչ մի փորձանք և ոչ մի ոյժ երկրի վերայ մեզ

խորտակել չի կարող, —այս հիմնաւոր պատճառը տեսական ուրախութեան և ոգևորութեան։ Այս, աւելի մեծ և հոգեապարար ուրախութիւն չի կարող լինել մի մաշկանացուի համար, քան այն խոնարհ և միանգամայն հպարտ զգացումը, թէ իւր անունը գրուած է երկնքում՝ թէ լուսոյ և կենդանութեան աղբիւրից ոչ մի անջրպետ իրեն չի բաժանում, թէ տիեզերքի Աստուծոյ աչքը իւր վերայ է, —քան այն հրձուանքը, որ նա է զգում, երբ աչքը վեր է բարձրացնում և «Հայր իմ» արտասանում, —և վշտերի աշխարհը կտրուում է ոտքի տակից, մանր հաշիւներ վերջանում, անձառելի երկնային խաղաղութիւն սփռուում իւր շուրջը։

գ) «Զէ՞ որ երկու Ճնձուկի գինը մի գրոշ է, ու նոցանից մէկը երկը վերայ չի ընկնում առանց ձեր Հօր։ Իսկ ձեր գլխի մազերն էլ բոլորը համրած են։ —Պարզ խօսքե՛ր, որոնց մարդու կրծքի մէջ հալած վստահութիւնը աւելի ամուր և անդրդուելի է դարձնում այն կեանքի պատահարների հանդէպ, քան հսկայական լեռների ապառած կողերն են։ Նոքա որոշում են, թէ ինչ ընդարձակութիւն պէտք է ունենայ դէպի Աստուծոյ նախախնամող զօրութիւնը տածած վստահութիւնը, —անահման։ որչափ ընդարձակ է կեանքը իւր բազմադիմի երեսյթներով, որչափ շատ առիթ ունինք մենք գողալու նորա պահպանութեան համար՝ այնչափ պէտք է ընդարձակուի նաև այն հաւատը, թէ տէրն ու կառավարողը Աստուծած է, թէ կեանք և մահ նորա ձեռին են, և ապահով պէտք է լինինք մեր կեանքի համար, որովհետեւ նա մեր ապրելն է կամենում, իրեւ խնամող հայր հսկում է մեր իւրաքանչիւր քայլափոխի վերայ։ Յետին Ճնձուկի կեանքն անգամ արժէք ունի, մեր կեանքը խիստ մեծ արժէք ունի Աստուծոյ աչքում —մի գիտակցութիւն է այդ, որ անչափ հարուստ է դարձնում մարդուն ամենադառն խեղձութեան մէջ՝ հեթանոս աշխարհին անձանօթ մի գողափար, որ քըիստոնէութեան յաղթական ընթացքի հետ ծաւալուելով՝ կեանքի սէր, փոխադարձ վստահութիւն, եղբայրական ջերմ զգացումներ, հերոսական ոգի է տարածել ամենուրեք։ Եւ

այդ գտղափարի մեծութիւնն ու խոր իմաստը պարզում է չորրորդ ասացուածքը:

Դ) «Ի՞նչ օգուտ կունենայ մարդ, եթէ ամբողջ աշխարհ վաստակէ, ու իւր անձը վրայ դնէ»—Այն օրուանից, երբ աստեղագիտութիւնը տիեզերքի անհունութիւնը բաց է արել մարդոց շացած աչքերի առաջ և ցոյց տուել որ մեր երկրագունան աւելի փոքր տեղ է բունում նորա մէջ քան աւազի հատիկն ովկիանոսի ափին՝ յաճախ քննադատութեան, և նոյն իսկ ծաղրի են ենթարկել ս. Գրքի սլաշտապանած հայեացը թէ մարդն է կենտրոն և նպատակ ամբողջ արարչագործութեան: Ի՞նչ յանդգնութիւն, ասում են, մարդու կողմից՝ երեակայեր թէ այդ անսահման հրաշալիքը նորա համար միայն գոյութիւն ունի, որ իւր մի չնչին բեկորի վերայ այդ ամենաչնչին արարածի կեանքը սպահպանէ: —Եւ սակայն այդպէս խօսողը ամէն ինչ արշինով չափելու սովոր գատաղութիւնն է միայն, —որքան խոշոր, այնքան և արժեքաւոր: Աւետարանը ուրիշ չափ է տալիս մեր ձեռքը: Հարկաւ ոչ մի տեսութիւն անսահմանի խորքը թափանցել և նորա պարփակած զաղանիքները քննել չի կարող. ո՞վ գիտէ, թէ երկնքի ու երկրի արարիչը ի՞նչ աշխարհներ, ի՞նչ գոյութիւններ, ի՞նչ խորհուրդներ ունի թագցրած նոցա մէջ: Բայց քրիստոնէի համար այսքանը հաստատ է, որ ուր ինչ էլ լինի՝ նոյն Արարիչ Աստուծոյ ձեռքի տակ է, նոյն մեր փոքրիկ երկրագնախ բնակիչների առաջ գծուած նպատակը պէտք է ունենայ, և այն մարդը, որ համարձակուում է երկնքի և երկրի Արարչին իւր Հայր անուանել՝ անշուշտ աւելի բարձր է քան երկինքն ու երկիրը իրենց նիւթական զարդ ու զօրութեամբ. այնքան բարձր, մինչ եթէ արարչագործութիւնն ուրիշ նպատակ իսկ չունենայ, նորա գոյութիւնը միայն բաւական է ամբողջի գոյութեան նպատակ տալու. եթէ հնարինի այս տիեզերքի անհունութեան մէջ մի ուրիշ տիեզերք դնել՝ անշունչ տիեզերք, այնուամենայնիւ աստուտծային սիրով թրթուացող կենդանի մի սիրտ աւելի ընդարձակ կլինի, և այդպիսի սրտից կաթած մի կաթիլ արիւն կկշռէ հսկայական հրային գնտերին:

Արդեօք ամբարտաւան և յանգուղն է դարձնում մարդուն այս համոզումը.—ոչ երբէք նա յառաջ գալ չի կարող, մինչև մարդկային ամբարտաւանութեան աղբիւրը ցամաքած շինի, մինչև մարդ ձեռք քաշած չլինի այն բոլորից, որ գին ունի նորա աչքում աշխարհի վերայ՝ առ ոչինչ չհամարէ այն բոլորը որի մէջ փառք և մեծութիւն է գըտ։ Կում: Ամբարտաւան էին յիրաւի հին յոյները, որոնք հըսակելով բնական հոգու գերազանցութիւնը նիւթեղէն զանգուածի նկատմամբ՝ դիտող ու դատող հոգուն, մտածելու և հաշուելու կարողութեան էին վերագրում այդ առաւելութիւնը. ուստի նիւթեղէն զանգուածի մի մաս էին համարում ու արհամարհում նաև մարդկային հասարակ ամբոխը, և բարձրացնում էին միայն սակաւաթիւ իմաստուններին, որոնք ընտրուել ելեր էին նորա միջից, և որոնք իրենց շետաքննին մտքի զօրութեամբ բնութեան գաղտնիքները թափանցել՝ կարեորն ու անկարեորը, ճշմարիտն ու սուտը, օգտակարն ու վնասակարը իրարից տարբերել կարող էին: Այս բարձրութիւնից նոքա միայն դէպի ցած էին նայում և երեակայում էին, թէ ոչինչ ու ոչ ոք չկայ աւելի բարձր: Խոկ Քրիստոս բարձրացնում է ամէն մի տառապեալ հոգու հրաւիրում բոլորին, որոնք մարդու կերպարանք, մարդու սիրա, մարդու հոգի ունին՝ կենդանի Աստուծոյ որդիք լինել և գորա համապատասխան արժէք վաստակել: Ամբողջ նիւթական աշխարհից բարձր զնելով՝ մի և նոյն ժամանակ նա հանում է մեղաւոր հոգուն մի նոր, մի բարոյական աշխարհի հանդէպ, որի առաջ անսահման ցածը է և թոյլ բայց որի մէջ անդադար զօրանալու և անվերջ դէպի բարձրը դիմելու երաշխիքն ունի ու վստահութիւնը, և ահա նորա դիմաց բացուում է ճշմարիտ բովանդակալից ու նպատակաւոր կեանքի յաւիտենական ասպարէզը:—Դիտուններից մէկի իմաստուն խօսքը, թէ այն անհատական կեանքն արժէք ունի, որ նպաստում է բարձրացնելու ընդհանուր մարդկութեան արժէքը՝ իւր ամենաընդարձակ նշանակութեամբ արդարացել է Քրիստոսի վարած և ուսուցած կեանքի մէջ: Նա այնպէս պայծառ կերպով որոշել է անհատական հոգու

արժէքը, որ ամենից խեղճին էլ միջոց է տուել մի բան աւելացնելու մարդկային պատմութեան գանձանակի վերայ, և այդպէս ամենամեծ չափով բարձրացրել է մարդկութեան արժէքը՝ իւր խակական բարձրութեան վերայ դրել։ Այդ բարձրութիւնից կախուած Աստուծոյ արքայութեան կշիռքի մի նժարի մէջ է ամենամեծ ու ամենավեմ կըօնական գազափարը—Աստուծուած մեր Հայրն է։ միւսի մէջ պէտք է զնենք ամենափեհ ու ամենաոգեսրիչ բարոյական համոզումը—Աստուծոյ որդի կոչուելու արժանիքն ունինք և լինելու պարտականութիւնը։



ՎԵՐԱԲՆՈՒԹՅԵԼՆ ՇՐՋԱՆ

ԺԵ. ԴԱՐՅՈՒ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ ԿՈԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԸ

Գլուխ Ա.

ՀԱՐԱԿՑ ԱՆԱՊԱՏ ԵՒ ՄՈՎՍԵՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ։

ՄԵԼՔԻՍԵԴԻ կաթուղիկոսութիւնը, որը քառորդ դարից աւելի տևեց (1593—1626 թ.), Հայոց եկեղեցւոյ պատմութեան ամենասարսափելի շրջաններից մէկն էր։ Քաղաքական անտանելի դրութիւնը Հայոց եկեղեցւոյ և առհասարակ հայ տարրի վերայ բերել էր մի յուսահատ թուլութիւն, որ երկար ժամանակ շահագործեց ՄԵԼՔԻՍԵԴ կաթուղիկոսը։ Տաթևացու դպրոցի հոգին և եռանդը, որ դարեր շարունակ մնացել էր Հայոց եկեղեցւոյ մէջ, այժմ կարծես բոլորովին պաղել էր։ Այդ դպրոցի աշակերտներից Մըաղիոն տիեզերալոյս վարդապետի ջանքերը ս. Էջմիածնի